ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 21 » ապրիլ 2025թ. No 2383 - Լ

ՄԱՆԿԱԲԱՐՁԱԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ և ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ԵՎ ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ԻՆՏԵՆՍԻՎ ԹԵՐԱՊԻԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման 18-րդ կետի 20-րդ ենթակետը, և 04.12.23 թվականի ՀՀ առողջապահության նախարարի «Հիվանդանոցային պայմաններում մանկաբարձագինեկոլոգիական տեսակի բժշկական օգնության և սպասարկման իրականացմանը ներկայացվող պահանջները՝ ըստ մակարդակների հաստատելու մասին» N 5798-Լ հրամանով սահմանված պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել՝

1) մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում, ինչպես նաև նորածնային և նորածնային ինտենսիվ թերապիայի բաժանմունքներում կրծքով կերակրման խորհրդատուի աշխատանքի ընդհանուր նկարագիրը՝ համաձայն հավելվածի:
2) Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումն առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
3) Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Արմեն Գասպարյանին:
4) Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2025 թվականի մայիսի 1-ից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2025 թվականի ապրիլ « 21 » - ի N 2383 – Լ հրամանի

ՆԿԱՐԱԳԻՐ
ՄԱՆԿԱԲԱՐՁԱԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ԵՎ ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ԻՆՏԵՆՍԻՎ ԹԵՐԱՊԻԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

1. **Կրծքով կերակրման խորհրդատու՝ ավագ բուժաշխատողը** ունի համապատասխան բարձրագույն կրթություն ու բժշկի որակավորում, մասնագիտացում (մանկաբուժություն, նեոնատոլոգիա, մանկաբարձություն և գինեկոլոգիա), օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է մասնագիտական գործունեության և ՇՄՋ հավաստագրեր:
2. **Կրծքով կերակրման խորհրդատու՝ միջին բուժաշխատողը** ունի առնվազն միջին մասնագիտական որակավորում, առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ մանկաբուժության, նեոնատոլոգիայի կամ մանկաբարձ-գինեկոլոգիայի ոլորտում և օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է առաջին անգամ մասնագիտական գործունեության կամ ՇՄՋ հավաստագիր:
3. **Կրծքով կերակրման խորհրդատուների (ավագ և միջին բուժաշխատողներ) համար պարտադիր է համարվում վերապատրաստումները՝** առնվազն «Կրծքով սնուցման խորհրդատվության» 40-ժամյա դասընթաց (ՇՄՋ կրեդիտավորված):
4. **Կրծքով կերակրման խորհրդատուների կողմից տրամադրվում է խորհրդատվություն՝** հղիներին, ծննդկաններին, կերակրող մայրերին կամ երեխային խնամող անձանց, բուժանձնակազմին:
5. **Կրծքով կերակրման խորհրդատուի հիմնական գործառույթներն են.**
   1) Աջակցել ծնողներին և նորածիններին հաղթահարել կրծքով սնուցման ընթացքում առաջացած խնդիրները, առավելագույնս աջակցել կրծքով կերակրման գործընթացին:

2) Պարբերաբար կազմակերպել մայրերի և երեխաների խնամքով զբաղվող բուժանձնակազմի համար կրծքով սնուցման խորհրդատվության թեմայով վերապատրաստման դասընթացներ (առնվազն 2 տարին մեկ), հանդիպումներ, թեմատիկ զրույցներ:

3) Կազմակերպել հղիների նախածննդյան հսկողություն իրականացնող բժշկական կազմակերպություններում հղիների համար կրծքով սնուցման թեմայով նախածննդյան ուսուցման դասընթացներ՝ ՀՀ ԱՆ չափորոշիչներում ներառված ծավալով:

4) Իրականացնել դեղերի և կրծքով կերակրման համատեղելիության վերաբերյալ խորհրդատվություն:

5) Մայրերի հետ յուրաքանչյուր զրույցի ընթացքում կիրառել «լսելու և իմանալու», «վստահություն ձևավորման և աջակցության» հմտություններ:

6) Նպաստել հնարավորինս շուտ և շարունակական «մաշկ-մաշկին» շփման գործընթացի կազմակերպմանը:

7) Աջակցել կյանքի առաջին ժամվա ընթացքում կրծքով կերակրման գործընթացին:

8) Աջակցել մայրերին հասկանալ երեխայի կերակրմանը պատրաստ լինելու նշանները:

9) Մայրերի հետ քննարկել կրծքով կերակրման մեխանիզմները, դիրքերը:

10) Աջակցել մայրերին նորածնին կրծքին ճիշտ ամրակցման հարցում:

11) Բացատրել մայրերին կաթնարտադրության մեխանիզմը, կրծքագեղձի անատոմիան:

12) Ըստ անհրաժեշտության աջակցել մայրերին կուրծքը կթելու հմտություններ ձեռք բերելու հարցում և տրամադրել խորհրդատվություն կրծքի կաթը կթելու (ձեռքով, կթիչ) և կթած կաթի պահպանելու գործընթացի կազմակերպման հարցում:

13) Աջակցել մայրերին, որոնք չեն կերակրել նորածիններին հետծննդյան վաղ շրջանում՝ հետագայում կրծքով կերակրումը բարեհաջող կազմակերպելու նպատակով (օրինակ՝ նորածինը գտնվում է ինտենսիվ թերապիայի բաժանմունքում):

14) Վերահսկել բժշկական կազմակերպությունում մանկանը բարեկամ 10 քայլերի պատշաճ իրականացմանը:

15) Հետևել «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի և «Կրծքի կաթի փոխարինիչների վաճառահանման միջազգային օրենսգրքի» դրույթների պահպանմանը:
16) Հակազդել կրծքի կաթի փոխարինիչների ցանկացած տեսակի գովազդին՝ բուժաշխատողներին քողարկված գովազդի բացահայտման և կանխարգելման նպատակով:
17) Լրացնել կրծքով կերակրման դիտարկման թերթիկը, համաձայն 01.03.2021 թ. ՀՀ առողջապահության նախարարի N 11-Ն հրամանով հաստատված հավելված 3-ի:
18) Բուժանձնակազմի համար պարբերաբար իրականացված և նախատեսվող վերապատրաստումների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել բժշկական կազմակերպության պաշտոնական կայքում:
19) Հավաքագրել բացառապես կրծքով կերակրման ցուցանիշների վերաբերյալ տվյալները և ամփոփված տեղեկատվություն տեղադրել բժշկական կազմակերպության պաշտոնական կայքում:
20) Ծննդատնից դուրս գրվող մայրերին գրավոր տեղեկատվություն տրամադրել հետագա բարեհաջող կրծքով կերակրման և բավարար կաթնարտադրության ապահովման վերաբերյալ:
21) Արհեստական կաթնախառնուրդի նշանակման յուրաքանչյուր դեպքում հարցը քննարիկել նեոնատոլոգի հետ՝ մոր (անհնարինության դեպքում՝ խնամողի) մասնակցությամբ:

6. **ԿՍԽ ավագ բուժաշխատողի լրացուցիչ գործառույթներն են.**
1) Աջակցել հիվանդ նորածնի կրծքի կաթով սնուցման գործընթացին:
2) Աջակցել մայրերին ցածր քաշով կամ հիվանդ նորածինների կերակրման գործընթացին:
3) Աջակցել բնածին արատներով երեխաների սնուցման կազմակերպման գործընթացին: